ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«06» հունիսի 2019 թվականի N:62 ք.Գյումրի

ՄՈՒՇԵՂ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ, ԲԱՐՍԵՂ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ, ԱՐՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ՄՀԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N:1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի 2019 թվականի հունիսի 5-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մուշեղ Մուրադյանին 2019 թվականի հունիսի 6-ին, 7-ին, 10-ին և 11-ին, իսկ գլխավոր մասնագետներ Բարսեղ Քոչարյանին, Արտակ Հայրապետյանին, Սամվել Հարությունյանին և առաջատար մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով զբաղեցնող Միեր Հարությունյանին 2019 թվականի հունիսի 6-ին, 7-ին, 10-ին, 11-ին և 12-ին գործուղել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ազատան գյուղ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ազատանի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում համակարգի գնահատման աուդիտ իրականացնելու նպատակով:
2. Մուշեղ Մուրադյանին, Բարսեղ Քոչարյանին, Արտակ Հայրապետյանին, Սամվել Հարությունյանին և Միեր Հարությունյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում,

ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է